Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
12 դեկտեմբերի 2024 թվականի N 2343-Ա/2 հրամանի

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

2024-2025 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների հանրապետական առարկայական օլիմպիադաների (Մաթեմատիկա, Ֆիզիկա, Աստղագիտություն, Կենսաբանություն, Ինֆորմատիկա /«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»/, Քիմիա, Աշխարհագրություն, Մայրենի /ընթերցանություն/, Հայոց լեզու, Հայ գրականություն, Պատմություն, Անգլերեն, Գերմաներեն, Ռուսաց լեզու, Ֆրանսերեն, Նախնական զինվորական պատրաստություն /«Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն»/) կազմակերպման, անցկացման և բողոքարկման

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2024-2025 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման, անցկացման և բողոքարկման հետ կապված հարաբերությունները:
2. Աշակերտների անվանական ցուցակների ձևանմուշները, առաջադրանքները, պատասխանները, արդյունքները և Օլիմպադայի վերաբերյալ այլ տեղեկությունները տեղադրվում են www.olymp.am և lib.armedu.am կայքերում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով՝ առաջին /դպրոցական/, երկրորդ /մարզային/ և երրորդ /հանրապետական/: 5-6-րդ դասարանների մայրենի և մաթեմատիկա առարկաների օլիմպիադաները անցկացվում են երկու փուլով՝ դպրոցական և մարզային:
4. Մայրենի (Ընթերցանություն) առարկայի օլիմպիադայի ստուգումն իրականացվում է ըստ ԿԳՄՍ նախարարության սահմանած ուղեցույցի, որը կտեղադրվի www.olymp.am կայքում:
5. Օլիմպիադան անցկացվում է ըստ խմբերի.

Մաթեմատիկա - I խումբ՝ 5-րդ դաս., II խումբ՝ 6-րդ դաս., III խումբ՝ 7-րդ դաս., IV խումբ՝ 8-րդ դաս., V խումբ՝ 9-րդ դաս., VI խումբ՝ 10-րդ դաս., VII խումբ՝ 11-12-րդ դաս.,
Աստղագիտություն - I խումբ՝ 10-12-րդ դաս.,
Ինֆորմատիկա (Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն) - I խումբ՝ 9-րդ դաս., II խումբ՝ 10-12-րդ դաս.,
Կենսաբանություն, Քիմիա, Աշխարհագրություն, Ռուսաց լեզու, Անգլերեն, Ֆրանսերեն, Գերմաներեն - I խումբ՝ 9-րդ դաս., II խումբ՝ 10-րդ դաս., III խումբ՝ 11-12-րդ դաս.,
Ֆիզիկա, Հայոց լեզու, Հայ գրականություն, Պատմություն, ՆԶՊ (Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն) - I խումբ՝ 9-րդ դաս., II խումբ՝ 10-րդ դաս., III խումբ՝ 11-րդ դաս., IV խումբ՝ 12-րդ դաս.,
Մայրենի (Ընթերցանություն) - I խումբ՝ 5-րդ դաս., II խումբ՝ 6-րդ դաս.:

6. Օլիմպիադայի երեք փուլերի առաջադրանքները՝ ըստ խմբերի, կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը առաջադրանքները տրամադրում է մարզային

կրթության վարչություններին օլիմպիադաների անցկացման օրը՝ էլեկտրոնային տարբերակով:

7. Ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն առարկաների երրորդ, իսկ կենսաբանություն առարկայի նաև երկրորդ փուլերն անցկացվում են երկու օրվա ընթացքում՝ տեսական և գործնական փուլերով:

8. Մաթեմատիկա և ինֆորմատիկա (Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն) առարկաների երրորդ փուլն անցկացվում է երկու օրվա ընթացքում՝ երկուսն էլ տեսական փուլով:

9. ՆԶՊ (Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն) առարկայի երրորդ փուլն անցկացվում է երեք օրվա ընթացքում՝ տեսական և գործնական փուլերով:

10. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:

11. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել տվյալ առարկայի մասնագետներ:

12. Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:

13. Հաստատության տնօրենը մինչև 2024թ. դեկտեմբերի 12-ը Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ ԿԿՏՀ) համապատասխան բաժնում Օլիմպիադային մասնակցել ցանկացող սովորողի համար իրականացնում է նշում՝ ըստ առարկաների, ինչպես նաև վերջնական ցուցակը ներկայացնում է մարզպետարան /Երևանի քաղաքապետարան/:

14. Սահմանված ժամկետի ավարտից հետո ԿԿՏՀ–ում ինքնաշխատ եղանակով ձևավորվում են մասնակիցների ցանկերը՝ ըստ առարկաների և ներկայացվում մինչև 2024թ. դեկտեմբերի 14-ը ներառյալ ԿԳՄՍՆ՝ info@olymp.am հասցեին: Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ մինչև 2024թ. դեկտեմբերի 14-ը ներառյալ նույնպես մասնակիցների ցուցակները՝ համաձայն ձևաչափի, ներկայացնում է ԿԳՄՍՆ՝ info@olymp.am հասցեով:

15. Առաջին փուլի մասնակիցների ցուցակը տեղադրվում է www.olymp.am և lib.armedu.am կայքերում:

16. Օլիմպիադայի բոլոր երեք փուլերն անցկացվում են՝ համաձայն ժամանակացույցի:

17. Օլիմպիադայի առաջին փուլի արդյունքները չեն բողոքարկվում:

18. Դպրոցի տնօրենը պատասխանների լրացված ձևաթղթերը երկու աշխատանքային օրվա ընթացքում հանձնում է մարզպետարան /Երևանի քաղաքապետարան/:

19. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի/ հանրակրթության վարչությունը դպրոցներից ստացված պատասխանների ձևաթղթերը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ՀՀ ԿԳՄՍՆ:

20. Պատասխանների ձևաթղթերը համակարգչային ծրագրի միջոցով մշակվում, ստուգվում և արդյունքները հրապարակվում են երկրորդ փուլի անցկացման օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ:

21. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է համաձայն ժամանակացույցի՝ մարզպետարանների /Երևանի քաղաքապետարանի/ կողմից սահմանված վայրում:

22. Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները՝ հանրապետական առարկայական հանձնաժողովի որոշման համաձայն:

23. Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքները ստուգում է մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ կողմից ստեղծված առարկայական հանձնաժողովը:

24. Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքների արդյունքների բողոքարկումը կատարվում է օլիմպիադայի անցկացման վայրում՝ օլիմպիադայի արդյունքները հրապարակելուց հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:

25. Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:

26. Օլիմպիադայի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակները և ստացած միավորները (համաձայն ձևաչափի) մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ԿԳՄՄՆ՝ info@olymp.am էլեկտրոնային հասցեով:

27. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է համաձայն ժամանակացույցի՝ ԿԳՄՄ նախարարության կողմից սահմանված վայրում:

28. Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ հանրապետական առարկայական հանձնաժողովի որոշման համաձայն:

29. Օլիմպիադայի երրորդ փուլի աշխատանքների արդյունքների բողոքարկումը կատարվում է օլիմպիադայի անցկացման վայրում՝ օլիմպիադայի արդյունքները հրապարակելուց հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում:

30. Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳՄՄ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:

31. **Մաթեմատիկա, Ֆիզիկա, Աստղագիտություն, Կենսաբանություն, Ինֆորմատիկա /«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»/, Քիմիա, Աշխարհագրություն** առարկաների օլիմպիադաների երրորդ փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրները համարվում են միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ:

Ժամանակացույց

Հ/Հ	Առարկա	Դպրոցական	Մարզային	Հանրապետական
1	Հայոց լեզու	դեկտեմբերի 18	հունվարի 23	մարտի 22-23
2	Քիմիա	դեկտեմբերի 19	փետրվարի 5	փետրվարի 28-ից մարտի 2
3	Աշխարհագրություն	դեկտեմբերի 20	փետրվարի 3	փետրվարի 25-26
4	Մաթեմատիկա	դեկտեմբերի 21	հունվարի 20	փետրվարի 15-17
5	Կենսաբանություն	դեկտեմբերի 23	հունվարի 30-31	փետրվարի 22-23
6	Ֆիզիկա	դեկտեմբերի 24	հունվարի 24	փետրվարի 18-20
7	Ռուսաց լեզու	դեկտեմբերի 25	հունվարի 21	մարտի 26-27
8	Աստղագիտություն	հունվարի 9	հունվարի 22	փետրվարի 21-22
9	Հայ գրականություն	հունվարի 10	հունվարի 29	մարտի 24-25
10	Ինֆորմատիկա	հունվարի 13	փետրվարի 4	մարտի 8-10
11	Պատմություն	հունվարի 14	փետրվարի 10	մարտի 4-5
12	Նախնական զինվորական պատրաստություն	հունվարի 15	փետրվարի 6	ապրիլի 25-27
13	Գերմաներեն	հունվարի 16	փետրվարի 11	մարտի 15-16
14	Ֆրանսերեն	հունվարի 16	փետրվարի 11	մարտի 15-16
15	Անգլերեն	հունվարի 16	փետրվարի 11	մարտի 15-16
16	Մայրենի	հունվարի 17	փետրվարի 10-14	